ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Հուլիսի 9-ին Ղուշչուլար գյուղի ադրբեջանցի հովիվների և Ասկերանի շրջանի Էնգելսի անվան կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայի պահակների միջև միջադեպ տեղի ունեցավ այդ տնտեսությանը պատկանող արոտավայրերում ապօրինաբար անասուններ արածացնելու համար: Դրա հետևանքով հովիվներից մեկը վիրավորվել էր, իսկ պահակը մարմնական վնասվածքներ էր ստացել: Փշրվել էին կոլտնտեսության մեքենայի ապակիներն ու լուսարձակները: Այդ փաստը հիվանդագին ընդունվեց բնակչության շրջանում: Նրա մի մասի, հիմնականում երիտասարդության մեջ առաջացավ հասցված վիրավորանքների համար հատուցելու պահանջ: Տեղի ունեցան մեկուսի կոնֆլիկտներ ազգամիջյան հողի վրա: Առանձնապես տագնապալի վիճակ է ստեղծվել ճանապարհներին, որտեղ հաճախակի են դարձել մեքենաների քարկոծման դեպքերը՝ թե մեկ և թե մյուս կողմից: Մի շարք դեպքերում իրավապահպան ուժերը հարկադրված էին ոչ մարտական կրակոցներ կատարել: Ներքին զորքերի և միլիցիայի ստորաբաժանումների շնորհիվ, որոնք վերահսկում են մարզի իրադրությունը, բանը, բարեբախտաբար, լուրջ ընդհարումների չհասավ:

— Հուլիսի 6-ի լույս 7-ի գիշերը Ստեփանակերտի ծայրամասում՝ Կրկժան վայրում, ձեռնարկված պրովոկացիան, ցավոք, ներգործություն ունեցավ, — Արմենպրեսի թղթակցին ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, կուսակցության Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը:— Մենք դարձյալ ականատես ենք այն անառարկելի փաստին, որ եթե հակահրավական ձեռնարկումները վճռականորեն չեն կասեցվում և ժամանակին ի հայտ չեն բերվում դրանք կատարած անձինք, լայնորեն չի հրապարակվում այդ ամենը, իրադարձությունները որպես կանոն զարգանում են մեզ համար անցանկալի հունով: Կարծում եմ, որ ռեգիոնում լարվածության սրման կողմնակիցները ձգտում են խանգարել Ազգությունների խորհրդի հանձնաժողովի ժամանմանն ու նորմալ աշխատանքին: Ինձ հայտնի է դարձել, որ այս անհանգիստ օրերին նորից են հաճախացել Բաքվի բանագնացների այցերը Լեռնային Ղարաբաղ, ինչը լուրջ մտահոգություն է պատճառում ԼՂԻՄ-ի բնակչության հայկական մասին: Որպես երկրի ժողովրդական դեպուտատ, ես ստիպված եմ ոչ դյուրին բացատրական աշխատանք տանել բնակիչների շրջանում, որպեսզի նրանք չտրվեն հույզերի գերիշխանությանը և չենթարկվեն ամեն կարգի հնարավոր պրովոկացիաների: Դա կարող է հանգեցնել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որոշման ձգձգմանը: Իսկ ԼՂԻՄ-ի խնդրի վերջնական և արդարացի լուծումը հնարավոր է միայն դեմոկրատական, սահմանադրական ուղիով:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ